ՀԱՋՈՐԱՆ ԲԼԲՈՒԼ

ԴՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Մաննա, թագաւոր	Մուսասիրի պատգ.
Հրանտ } Մաննայի որդիները	Միլոիսի պատգ.
Պարէտ }	Պալատականներ.
Սուրէն }	Քրմեր
Ոգի	Դուսաններ
Փերի	Ջոր
Ուրատրուի պատգամաւոր	Սպասաւոր

Գործողութիւնը կատարւում է Վանայ ծովակի շրջակայքում հեթանոսական դարերում։

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

Ծառաստան և գեղեցկաշէն ապարանք

Երևույթ I

ՀՐԱՆՏ, ՊԱՐԷՏ, ՍՈՒՐԷՆ և ջոր

ՀՐԱՆՏ Արքան հրամայեց որ դիմաւորենք
Պալատի առաջ։

ՊԱՐԷՏ Հետաքրքիր է,
Արդեօք եկե՞լ է Ուրարտուի արքան։

ՀՐԱՆՏ Ոչ, նա չի եկել. այլ ուղարկելով
Մի պատգամաւոր, շնորհաւորում է
Մեր նոր պալատը, ներումն է խնդրում
Մեր հայր-արքայից, որ անկարող է
Անձամբ մասնակցել այսօրուայ այս մեծ,
Փառաւոր տօնին։

ՍՈՒՐԷՆ Իսկ ինչու ինքը
Անկարող եղաւ անձամբ մասնակցել։
ՀՐԱՆՏ Ասորեստանցիք մտել են դարձեալ
Ուրարտուի հողը, և թագաւորը
Ժողովել է իր բոլոր զօրքերը,
Դուրս եկել ռազմի արիւնոտ դաշտը։
ՊԱՐԷՏ Մենակ է կռուում։
ՀՐԱՆՏ Ոչ, նա մենակ չէ.
Աջակցում են և նորա դաշնակից
Մուսասիրի և Միլդիսի հզօր
Թագաւորները։
ՍՈՒՐԷՆ Ապա ուրեմն
Նորանք էլ չեն գալ ալսօրուալ տօնին։
ՀՐԱՆՏ Ոչ. նորանք էլ են ուղարկել իրանց
Պատգամաւորին։
(Լսւում են շեփորների և փողերի ձայներ)
Ահա գալիս են.
Շուտով կը սկսուի շքեղ հանդէսը։
ՊԱՐԷՏ Այո, կը սկսուի, եթէ որ լանկարծ
Դարձեալ որև է մի անակնկալ
Արգելք չը լինի։
ՍՈՒՐԷՆ Ո՛չ, ես չեմ կարծում...
(Մտնում են քրմերը և Մաննան իր պալատականների ու օտարերկրեալ պատգամաւորների հետ միասին)։

Երեւոյթ II

ՄԱՆՆԱ, ՀՐԱՆՏ, ՊԱՐԷՏ, ՍՈՒՐԷՆ, քրմեր, պալատականներ. պատգամաւորներ և զօրքեր։

ՄԱՆՆԱ (պատգամաւորներին)
Պատուական հիւրեր, թոյլ տուէք, որ ես
Ներկայացնեմ ձեզ իմ որդիներին.
Ահա մեծ որդիս՝ անվախ իմ Հրանտը,
Որ իր քաջութեամբ Հայոց աշխարհում
Ժառանգել է մեծ հերոսի անուն։
Ահա և միջնակ իմ Պարէտ որդիս,
Որ մեն ու մենակ՝ անտառի միջին
Սպանեց հարիւր հատ ասորեստանցու,

Գետինը ներկեց կարմիր արիւնով,
Աշխարհ թնդացրեց իր քաջ գործերով։
Իսկ սա իմ փոքր Սուրէն որդին է,
Ինքը ողջամիտ, քաջ ու հնարագէտ,
Բարի, իմաստուն և ճշմարտախօս։

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Մաննա արքայի որդոց գովեստը,
Եւ լաւ համբաւը մենք միշտ լսել ենք։

ՄԻԼԴԻՍԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Ամբողջ Միլդիսը ըսքանչանում է
Մաննայի որդոց բարեմասնութեամբ։

ՄԱՆՆԱ Ահա գեղեցիկ իմ նորակառոյց
Մեծ ապարանքը։

ՄՈՒՍԱՍԻՐԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Հիանալի է։

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Ամբողջ Ուրարտու պետութեան միջին
Ոչ մի ժամանակ դեռ չէ կառուցուած
Այսպիսի շքեղ, սիրուն ապարանք։

ՄԱՆՆԱ Նայեցէք, որքան բարձր, վիթխարի,
Հսկայական են այն պարիսպները.
Տեսէք՝ թէ որքան գեղեցկաքանդակ
Ու հրաշալի են այն կամարները։

ՄՈՒՍԱՍԻՐԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Նայեցէք մարմար այն սանդուղներին,
Կանգուն, հաստատուն բարձր սիւներին,
Նայեցէք նախշուն լուսամուտներին...
Մեր Մուսասիրի պետութեան մէջ էլ
Դեռ չէ կառուցուել այսպիսի պալատ։

ՄԱՆՆԱ Իսկ տեսնում էք դուք այն գոհարները,
Ցակինթ ու լալը, անգին քարերը
Որոնք չորս կողմից պատերի վերայ
Շողշողում են վառ, որպէս երփներանգ,
Գոյնզգոյն աստղեր...

ՄԻԼԴԻՍԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Որպէս հիասքանչ
Մի գեղեցկուհու վարվառուն աչեր։

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Ո՛հ, ինչ հմտութիւն, ինչ գեղեցկութիւն,
Որպիսի ճաշակ, ճարտարպետութիւն։

ՄԱՆՆԱ. Իսկ ներսը, ներսը... եթէ դուք տեսնէք
Պալատիս ներսը, դուք կսքանչանաք։
Այժմ հրամեցէք, եկէք, գնանք ներս...
Դէ, իմ սիրելի և քաղցրիկ ոլդիք,
Առաջնորդեցէք անգին հիւրերին.
Մեր նորակառոյց պալատի առթիւ
Սարքած այսօրուան շքեղ հանդէսը
Թող օրհնեն հզօր մեր աստուածները...
Դէ, թող հաւաքուեն մեր զուսանները,
Հնչեցրէք բոլոր նուագարանները...
Գնանք... (նայելով երկնքին) Բայց կացէք...
Ամպը երևաց։

Ամենքը (ապշած)

Ո՞ր ամպը, արքայ։

ՄԱՆՆԱ. (յուսահատուած) Այն չարագուշակ
Փոթորկի մռայլ, ահաւոր ամպը,
Որ այսքան տարի հանգիստ չէ տալիս։
Այսօր չենք կարող գնալ ապարանք,
Ապարանքի մէջ կայ մի թերութիւն...
Յետաձգուում է այսօր հանդէսը...
Շուտով կը սկսուի ահեղ մրրիկը,
Շուտով կը շարժուեն լեռները տեղից։
Անտառը յուզուած կը տարուբերուի,
Հաստարմատ կաղնի ծառը դարաւոր
Պիտի տապալուի հողմից զօրաւոր.
Թանձր մառախուղ կը պատի աշխարհ,
Ասուն, անասուն կը սոսկան խպառ...
Նայեցէք վերև՝ ամպը թանձրացաւ,
Ամպը սևացաւ, մթնում է երկինք,
Խաւարում աշխարհ, մշուշը պատեց...
Խնդրեմ գնացէք, ինձ մենակ թողէք...
(Ամենքը ապշած հեռանում են. սկսում է քամին)

Երևոյթ III

ՄԱՆՆԱ (մենակ) Եւ ամեն անգամ, երբ կառուցում է

Իմ ապարանքը, նա երեւում է։
Քամին սաստկացաւ, խառնակուեց աշխարհ.
Ահա երկինքը սեւացաւ խաւար,
Գոռում են ամպեր, շարժւում է երկիր...

(Փոթորիկ)

Նա հիմա կը գայ, հիմա կերեւայ,
Եւ ամէն անգամ կայծակ, փոթորիկ...
Գարշելի, զազիր, դու ժանտ ծերունի,
Դու սուտերի նման յայտնւում ես յանկարծ,
Եւ սուտերի նման չքանում իսկոյն։
Դու երկու անգամ ինձ քանդել տուիր
Իմ շքեղ տունը, չասացիր նորա
Պակասութիւնը... Սակայն այս անգամ
Դու չես ազատուիլ իմ ճիրաններից...
(փայլատակումներ. յայտնւում է Ոգին ծերունու կերպարանքով)։

Երեւոյթ IV

ՄԱՆՆԱ ԵՒ ՈԳԻ

ՈԳԻ Փրփրած, կուզուած, մռնչող ծովի,
Յորդալից, կատղած, վազող գետերի,
Հողմակոծ, հեծծող, խիտ անտառների,
Վիթխարի, ձիւնոտ, հսկայ լեռների,
Աշխարհի հզօր վեհ ինքնակալից,
Մեծ, աշխարհաշէն և գեղեցկասէր
Արքայից արքայ Մաննային ողջո՛յն։
ՄԱՆՆԱ Ասա՛, ո՛վ ծերուկ, եկել ես դարձեալ
Իմ ապարանքը աւերել տալու,
Թէ եկել ես այն գովաբանելու։
ՈԳԻ Ո՛վ մեծ թագաւոր, քո ապարանքը
Մեծ է, փառաւոր, որպէս անունդ.
Նորա պարիսպը հաստատ է, ամուր,
Որպէս քո հզօր, մեծ պետութիւնը։
Նորա սիւները կանգո՛ւն են, տոկո՛ւն,
Որպէս անվեհեր քո գինուորները.
Նորա տանիքը վեհ է, հաստատուն,
Որպէս երկնքի բարձր կամարը...

ՄԱՆՆԱ Իսկ նորա փնտրը, գեղեցկութիւնը։
ՈԳԻ Գեղեցիկ է այն և հիանալի,
Որպէս ապագայ վարդագոյն լոյսը։
ՄԱՆՆԱ Ուրեմն չունի՞ էլ պակասութիւն։
ՈԳԻ Աշխարհիս վերայ ամեն կատարեալ
Ու լիակատար կատարելութիւն
Կարօտ է դարձեալ կատարելութեան,
Եւ ամենայն մի առաւելութիւն
Կարօտ է դարձեալ առաւելութեան
Ամեն վեհափառ բարձր վեհութիւն
Կարէ առաւել վեհափառ լինել։
Ամենայն մի շուք, և ամեն մի փայլ
Կարող է լինել աւելի պայծառ...
ՄԱՆՆԱ Բայց ինչ միջոցով և ինչ հնարքով
Կարող եմ ես իմ շքեղ պալատը
Աւելի շքեղ ու պայծառ դարձնել,
Ի՞նչով կարող եմ թերին լրացնել։
ՈԳԻ Դու խորհրդակցիր քո ողջ պետութեան
Իմաստունների և քրմերի հետ,
Թող նորանք ասեն քո ապարանքի
Պակասութիւնը... Ողջ լեր, տէր արքայ։
ՄԱՆՆԱ Սպասիր, ով ծերուկ. ես հրամայում եմ,
Որ ինքդդ ասես պակասութիւնը։
ՈԳԻ Ո՛հ աշխարհակալ, հզօր թագաւոր,
Քո ոտքի տակ է աշխարհը բոլոր.
Սաստիկ և ահեղ քո հրամաններից
Դողում են մարդիկ, սոսկում ամեն տեղ.
Քեզ միշտ հնազանդ է հողը և ջուրը,
Հնազանդ է նաև օդը և հուրը.
Սակայն մենք երբէք չենք հրնազանդուում
Երկրի հողեղէն վեհապետներին։
(Որոտումնք)
ՄԱՆՆԱ (բարկացած)
Ինչպէս... Ապրում ես դու իմ աշխարհում
Դեռ յանդգնում էլ ես չը հնազանդուել
Իմ հրամաններին,.. Ես քեզ կը ստիպեմ,
Եղկելի ծերուկ....
ՈԳԻ Թող բարկութիւնդդ,

Թող այդ քո ունայն սպառնալիքը.
Ես հպատակ չեմ Մաննա արքային,
Եւ չեմ բնակւում նորա աշխարհում.
Ունիմ ես ահեղ և անմատչելի
Մի այլ հայրենիք, այլ ծննդավայր,
Որից սոսկում է բոլոր աշխարհը,
Որից սոսկում է ցեղը մարդկային...
(Գայլասակումներ և որոտմունք)
Ոչ մի հողնդէն դեռ չէ յանդգնել
Մերձենալ ազատ իմ հայրենիքն.
Իսկ թէ պատահմամբ կամ յանդգնութեամբ
Մօտեցել է մի մարդկային էակ—
Հրաժեշտ է տուել իսկոյն իր կեանքին...
(Գայլասակումներ և որոտմունք)
Դեռ մահկանացուն ոտքը չի դրել
Անմերձենալի մեր հողի վերայ
Հայրենիքիս մէջ ազատ մուտք ունի
Միայն մարդկային միտքը սաւառնող...

ՄԱՆՆԱ Ասա, որտեղ է քո հայրենիքը։

ՈԳԻ Իմ հայրենիքը այստեղ է, այնտեղ
Այլ և ամէն տեղ։

ՄԱՆՆԱ Ծննդավայրդ։

ՈԳԻ Անհասանելի, բարձր և ազատ
Մասեաց լեռների մութ անդունդները...
(Գայլասակումներ և որոտմունք)
Այնտեղ է ահա իմ անմատչելի
Եւ անքննելի ծննդավայրը.
Այնտեղ են լինում հարազատ, ազատ
Իմ ծննդակից հզօր քայլերը...
(Մաննան սարսափում է)
Բայց մի երկնչիր, թագաւորները
Զը պէտք է երբէք սոսկան ու դողան...
Բնաւ չեմ եկել քեզ վնաս տալու
Կամ քեզ տանելու մեր անդունդները։
Եկել եմ քեզ մօտ, որպէս բարեպաշտ
Ու պատկառելի ալեոր մի մարդ...

ՄԱՆՆԱ (Ծնկաչոք)
Աղաչում եմ քեզ, օ, պաղատում եմ,
Մի մերժիր խնդրեմ իմ ցանկութիւնը.

Ինքդդ ասացիր, որ դու եկել ես,
Որպէս բարեպաշտ ալևոր մի մարդ.
Ուրեմն պահ մի եղիր որպէս մա դ,
Մարդկային բոլոր արժանիքներով,
Մարդկային սրտի բարութիւններով։

ՈԳԻ Ո՛հ, մենք չարութիւն երբէք չենք անում—
Մենք հալածում ենք չարութիւնները։

ՄԱՆՆԱ Քո բարութիւնը ես չեմ մոռանալ,
Կը մնամ ընդ միշտ քեզ երախտապարտ,
Եթէ ինձ ասես իմ ապարանքի
Այդ թերութիւնները։ Այն, ինչ որ դու միշտ
Հեռատես աչքով կարող ես դիտել.
Այն, ինչ որ դու անհուն եթերից
Կարող ես տեսնել, քննել, հասկանալ—
Վեր է մարդկային կարողութիւնից։
Այն գաղտնիքները, որ դու կարող ես
Ինձ լաւ բացատրել ու պարզաբանել—
Իմ ողջ պետութեան իմաստունները,
Բոլոր քրմերը, ծերունիները,
Չեն կարող երբէք այնպէս բացատրել.
Ոհ, ասա, ցոյց տուր իմ տան պակասը...
Տես, թագաւորն է ծնկաչոք խնդրում...

ՈԳԻ Ո՛վ, Մաննա, Մաննա, քեզ չէ վայելում
Ծնկաչոք խնդրել... Բայց բաւ է, կասեմ։—
Նախկին պալատդ դու աւերեցիր
Եւ մի շքեղը նորից շինեցիր.
Երկրորդը դարձեալ դու աւերեցիր
Ու մի երրորդը հրաշակերտեցիր.
Բայց գեղեցկագեղ և քո հիասքանչ
Նոր շէնքդ համար պակաս է միայն
Հազարան-բլբուլ անգին թռչունը...

ՄԱՆՆԱ Այդ ինչ թռչուն է, ինչի համար է։

ՈԳԻ Երբ նա երգում է, լերկ ապառաժը
Իսկոյն ծաղկում է, իբրև բուրաստան.
Իսկ չոր ու խոպան գետինը յանկարծ
Ծածկւում է սիրուն մետաքսէ խոտով։
Երբ երգում է նա, երկնային բոլոր
Փետրաւորները և անտառային

Երգի՝ հուշքերը լռում են իսկոյն
Եւ ականջ դնում դիւթուած, հմայուած
Նորա մեղմանոյշ, քաղցր գեղգեղին։
Երբ երգում է նա, զառամեալ ծերը
Իսկոյն մանկանում, նոր կեանք է առնում.
Իսկ մեռելները նորա դայլայլից
Կենդանանում են, յարութիւն առնում։
Երբ երգում է նա, անշունչ անզգայ
Քարերը իսկոյն շունչ են ստանում։

ՄԱՆՆԱ (հիացած)

Այդ ի՜նչ սքանչելի, հրաշալի՜ թռչուն։

ՈԳԻ Եթէ նա երգի խաւար գիշերը,
Իսկոյն երկինքը կը շառագունի
Արևի ոսկէ ճառագայթներով.
Իսկ եթէ երգի դաժան ձմեռը,
Իսկոյն կը բացուի պայծառ գարունը,
Վարդը կը բացուի, ծառը կը ծաղկի։
Նորա դայլայլից, անուշ գեղգեղից
Ու հազար տեսակ կլկլոցներից
Իսկոյն անցնում է մարդկային սրտի
Բուռն զայրոյթը և բարկութիւնը.
Իսկ փոթորկայոյզ ու փրփրադէզ,
Մռնչող ծովը մի ակնթարթում
Իսպառ հանդարտւում ու մեղմանում է...

ՄԱՆՆԱ (հիացած)

Բայց ասա, խնդրեմ, որտեղ է լինում
Այդ հրաշալի, անգին թռչունը—
Ես բերել կը տամ նորան իմ տունը։

ՈԳԻ Եթէ նա բերուի քո ապարանքը—
Կը լինի քո տան մեծ զարդարանքը։

ՄԱՆՆԱ Իսկ որտեղ է նա, որտեղ է լինում։

ՈԳԻ Նա բնակւում է շատ ու շատ հեռու,
Անմերձենալի անտառի խորքում.
Նորան գտնելը շատ դժուարին է,
Իսկ ճանապարհը խիստ վտանգաւոր...

(Որոտմունք. անյայտանում է Ոգին)

Երեւոյթ V

ՄԱՆՆԱ (մենակ)

Գնաց... չքացաւ... խօսքը չաւարտեց...
Եթէ որ իրօք աշխարհիս միջին
Կայ մի այդպիսի հազուագիւտ երգիչ,
Էլ ում համար է նա աշխարհ եկել,
Թէ որ Մաննալի տանը չի լինիլ։
Ի՞նչ կասեն մարդիկ, եթէ իմանան,
Որ իմ պալատում պակասում է մի
Այդպիսի անգին, հրաշալի թռչուն.
Էլ ինչ եմ անում բարձր անունս
Եւ արքայական փառք ու պատիւը,
Եթէ ես նորան ինձ մօտ չը բերեմ.
Էլ ինչ եմ անում իմ թագն ու գահը
Անհամար գանձը, հարստութիւնը,
Թէ արքայական ապարանքիս մէջ
Չը պիտի լինի Հազարան-բլբուլ
Հազարան-բլբուլ... Ահա գաղտնիքը։
Եւ այսքան տարի մենք տանջւում էինք,
Զիմանալով մեր արքայական տան
Այդ խոշոր ու մեծ պակասութիւնը։
Ա՛խ, եթէ գտնեմ, ձեռք բերեմ նորան,
Աշխարհիս բոլոր թագաւորները
Ինձ կը նախանձեն, երանի կը տան։
Բայց .. Նա ինձ ասաց, որ ձեռք բերելը
Շատ դժուարին է, իսկ ճանապարհը
Խիստ վտանգաւոր... Սակայն մթթէ իմ
Գեղութեան միջին չի ճարուիլ մէկը,
Որը մարտնչի արգելքների դէմ
Ու շահի իր մեծ արքայի սիրտը։
Սիրելի որդիք, պալատականներ,
Շուտ հաւաքուեցէք, եկէք դուք այստեղ։
(Մտնում են արքայորդիները և պալատականները)

Երեւոյթ VI

ՄԱՆՆԱ, ՀՐԱՆՏ, ՊԱՐԷՏ, ՍՈՒՐԷՆ և պալատականներ

ՄԱՆՆԱ Գաղտնիքը բացուեց. սակայն թէ ինչպէս.—

Այդ թող ձեզ համար դեռ մնալ անլսելու
Այսքանը կասեմ, որ իմ տան համար
Պակաս է միայն Հաղարան-բլբուլ,
Հասկանում էք լաւ, Հաղարան-բլբուլ...
Եւ առանց նորան՝ տունը կաւերուի,
Քար քարի վերայ չի կարող մնալ.
Մենք առանց նորան՝ չենք կարող սարքել
Ոչ հանդէս, ոչ տօն և ոչ էլ խրախճանք...
Ողջ երգիչների թագուհին է նա,
Հրաշալիքների մեծ հրաշալիքը.
Երգում է նա միշտ մեղնից շատ հեռու,
Անմերձենալի անտառի խորքում
Նորան գտնելը, նորան ճարելը
Շատ դժուարին է, իսկ ճանապարհը
Խիստ վտանգաւոր, գուցէ՝ և ահեղ
Ու սարսափելի... Հիմա ասացէք,
Ո՞վ է ձեղանից անվեհեր ու քաջ,
Որ կարողանայ կռուել, մաքառել
Արդելքների դէմ, ձեռք բերել նորան...
(Ամենքը լուռ են)
Ո՞վ է ձեղանից ամենից արին,
Ամենից սրտոտն ու քաջազօրը,
Թող նա առաջ գայ, և ինձ մօտենայ.
(Ամենքը լուռ են)
Իմ հաւատարիմ պալատականներ,
Իմ խոնարհ, հլու և անվախ քաջեր,
Ով որ ձեղանից ձեռք բերի, ճարի
Ինձ համար անգին բլբուլ-սոխակին,
Ես կը պարգևեմ նորան մարգարտէ
Եւ յակինթակապ սիրուն վարսակալ.
Կը տամ ես նորան թանկագին գինտեր,
Գեղեցիկ կարած մի կարմիր կօշիկ.
Կը տամ իրաւունք ճաշ վայելելու
Ոսկէ գդալով, պատառաքաղով.
Կը տամ իրաւունք գինի ըմպելու
Պատուական, շքեղ ոսկէ գաւաթով.
Կը տամ իրաւունք բարձակից լինել,
Իմ ներկայութեամբ բարձին թէք ընկնել...

Կընծայեմ նորան ամբողջ մի գաւառ,
Պատուական ընտիր ձիերի մի ջոկ
(Ամենքը լուռ են)
Ո՞վ է ձեզանից պատրաստ զոհուելու
Իր բարեխնամ արքայի համար,
Թող նա առաջ գայ և ինձ մօտենայ։

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ

Ողորմած արքայ, մենք բոլորեքեան
Միշտ պարտաւոր ենք անձնուիրութեամբ
Մեր անձը զոհել արքայի համար...
Բայց մի գործ, որի յաջողութիւնը
Անլուսալի է և կասկածելի...

ՄԱՆՆԱ (Բարկացած)

Անհաւատարիմ, վախկոտ արարած.
Եւ դու ես կոչւում պալատիս միջին
Առաջին մարդը և իմ աչ թեը...
Մթթէ դու չէիր, որ քո նիզակով
Ասորոց զօրքի հրամանատարի
Լերդն ու թոքը հանեցիր կրծքից.
Դու չէիր արդեօք որ երկու ձեռքով
Որսի ժամանակ առիւծ խեղդեցիր
Եւ խորտակեցիր կատղած վարազի
Սուր ժանիքները։ Եւ այսօր յանկարծ
Խօսում ես ինձ հետ, իբրև մի վախկոտ,
Իբրև մի չնչին ու թոյլ նապաստակ...
Այսօր այդ չնչին, թոյլ նապաստակի
Վզից կը կապուի անագին մի քար,
Կը նետուի անտակ Բզնունեաց ծովի
Հողմակոծ, ահեղ ալիքների մէջ...

ՍՈՒՐԷՆ Հայր, մի բարկանար. ես յանձն եմ առնում
Աշխարհս շրջել, որոնել, գտնել
Քո ցանկացածը։ Խոչնդոտների
Եւ արգելքների ես ճիրաններից
Կաշխատեմ մի կերպ դուրս կորզել ուզած
Անգին թաշունդ։

ՀՐԱՆՏ (առանձին) Անմիտ, անտեղի,
Մեծ յանդգնութիւն։

ՊԱՐԷՏ (Սուրէնին) Դեռ դու շատ անփորձ,

Անհեռատես ես. ինքդ չը գիտես՝
Թէ ուր ես գնում և ինչու համար։

ՍՈՒՐԷՆ Թէ ուր եմ գնում և ինչու համար—
Արդէն մեր հայրը կարծեմ մեզ լալանեց...

(Հրանտն ու Պարէտը հեգնօրէն քրքջում են)

ՄԱՆՆԱ Այո՛, լալանեցի։

ՍՈՒՐԷՆ Ու ես գնում եմ։

ՀՐԱՆՏ (հեգնելով) Բարի՛ ճանապարհ.

ՊԱՐԷՏ (հեգնելով) Բարով յետ դառնաս։

ՍՈՒՐԷՆ Կամ յետ կը դառնամ կամ կը չքանամ.
Ու մեր պալատում կամ մահիս դուռը
Ողբը կը հնչի, կամ թէ Հաղարան
Անգին բլբուլի քաղցր մեղեդին...
Դէ, մնաք բարեաւ...

ՄԱՆՆԱ (համբուրելով Սուրէնին)
Դէ, գնաս բարեաւ. թող աստուածները
Օրհնեն քո ուղին։ Մաղթում եմ ես քեզ
Բարի վերադարձ և յաջողութիւն.
Գնա, մաքառիր վտանգների դէմ,
Ժառանգիր անմահ հերոսի անուն
Ե՛կ, ուրախացրու ծերունի հօրդ
Ժառանգիր նորա հաստատուն գահը

(Սուրէնի փոքր հեռանալուց յետոյ)

Սուրէն, մնա, արի մէկ էլ համբուրեմ.

(համբուրում է Սուրէնին. Սուրէնը հեռանում է)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Վերջը յետևեալ համարում)